

Դատաստանի Օրվա լավագույն պատրաստությունը

Դատաստանի Օրվա լավագույն
պատրաստությունը

<https://islamhouse.com/438658>

- [Դատաստանի Օրվա
լավագույն
պատրաստությունը](#)
 - [Նվիրված է](#)
 - [Ներածություն](#)
 - [Որոշ
գերազանցություններ
ով գործեր](#)
 - [Մաս երկրորդ](#)
 - [Մուտք](#)

- Լրիվ փառքը
Ամենագոր Ալլահին:
Նա ասում է.
- Նախաբան
 - «Իսկ հետո ես նրանց
մոտենալու եմ հետևից
և առջևից, ձախից և
աջից, և Դու նրանց
մեծամասնությունը
երախտամոռ
կճանաչես» (7: Ալ-
Արաֆ, 17):
 - «Նա ասաց.
«Աստվա՛ծ, ինչու՞ ինձ
մոլորեցրեցիր, ես
անմիջապես
կհափշտակեմ
երկրայինն ու
կվերադարձնեմ նրանց

բոլորին, բացի Քո
ընտրյալ (կամ
անկեղծ)
ստրուկներից» (15: Ալ-
Հիշր, 39,40):

- Մաս առաջին
 - Որոշված
առավելություններով
պարտավորություննե
ր
 - Ա.
Պարտավորություննե
ր աղոթքից առաջ.
 - 1- Լվացումը
 - 2-Սիվակ (Արակ
կոչվող ատամի
ձողիկ)
 - Բ-Մասջիդի
(մզկիթի) հետ

կապված
պարտավորություն
ներ

- 1-Մզկիթ այցելելը
- 2- Մաքրումն ու
հնազանդությունը
դեպի մզկիթ
ճանապարհին և
աղոթքի
ժամանակ.
- 3-Աղոթքի կանչը
(Ազան)
- 4-Միասնական
աղոթքը
(Հավաքույթ)
- 5-Աղոթքի շուտ
գնալը
- -Աղոթքի համար
շուտ գնալը`

մանավանդ
ուրբաթօրյա
աղոթքի

- 6-Մշտական
սուննաները
- Դ. Առաքա օրվա
պահքը

- 3. Ժամանակներն ու
տեղերը որոնցում
տրվում է կրկնակի
պարգև ընդունվող
աղոթքի համար

- Ա. Ժամանակներ
որոնցում տրվում է
կրկնակի պարգև
ընդունվող
աղոթքի համար
- 1-Ռամադան
ամիսը

- 2. Զուլ-Հիջի
տասերորդ օրը
- 1. Գիշերվա վերջին
ժամվա
աղոթքները
- 2. Ազանի ու
Իկամուի միջև
աղոթքը (ներումը)
- 3. Ուրբաթ օրվա
ընդունման
(աղոթքների)
ժամը
- 4. Պահքի
դադարման
համար աղոթքը
- 5. Առաֆա օրվա
աղոթքը
- 6. Ամբողջ
Դուրանն

ընթերցելուն
անմիջապես
հաջորդող աղոթքը

- 7.Չամգամ
ջրհորից ջուր
խմելուն
անմիջապես
հաջորդող աղոթքը
- 1. (Ալ-Մասջիդ Ալ-
Հարամ) սուրք
մզկիթը
Մեքքայում
- 2-Մարգարեի
մզկիթը
Մեդինայում
- 3-Ալ-Ակսա մզկիթը
Երուսաղեմում
- 4-Կուբա մզկիթը

- 5-Աղոթքը
Քաարայի դռների
մոտ (Ալ-
Մուտագամ)
- 4. Ալլահին
հիշատակելու համար
հավարուլթ
- 5. Ալլահին
հիշատակելը
 - Բ. «Չկա աստված,
բացի Ալլահից»
բառերը
 - Գ. «Լրիվ փառքը
Աստծուն, լրիվ
գովքը Նրան,
փառք մեծն
Աստծուն» բառերը
 - Դ. «Փառք
Աստծուն և լրիվ

գովքը Նրան»
քառերը

- 6. Հավաքուլթի
մարունը
- 7. Ալլահի նկատմամբ
վախը
- 8. «Ինձ միայն Ալլահին
էլ է բավական»
քառերը, երբ երեխա է
մահանում
 - Ա. Գովասանքի
տունը
 - Բ. Երկու կամ երեք
երեխաներ
կորցրած մարդու
պարզևը
- 9. Մարգարե
Մուհամմդին
(խաղաղություն և

Ալլահի ողորմությունը
լինի նրան) լսելը

- 10. «Խաղաղություն և
Ալլահի ողորմությունը
մարգարե
Մուհամմեդին»
քառերը
- 11. Որոշ աղոթքներ ու
դրանց
առավելությունները
 - Ա. Քնից առաջ
աղոթքը
 - Բ. Աղոթքը երբ
մարդը գտնվում է
պարտքերում և
դժբախտության
մեջ
- 12. Դուրանի
ընթերցումը

- 13. Ղուրանի անգիր սովորելն ու որոշ սուրաների գերազանցությունը:
 - Որոշ սուրաները հիշելու գերազանցությունը
- Մաս երկրորդ
 - (Բարի գործեր, որոնց օգուտները տրվում են հաջորդ կյանքում կամ Վերջին Օրը):
 - 1.Բարեգործություններ
 - Ալլահին ասել է.
 - «Ճշմարիտ, այն տղամարդկանց և կանանց

համար որոնք
ողորմություն էին
տալիս և Ալլահին
էին տալիս
հոյակապ
փոխառությունը,
այն մեծացված
կլինի: Նրանց
համար
առատաձեռն
պարգև է
պատրաստված»
(57: Ալ-Հադիդ,
18):

- 4.Արարքներ, որոնց
օգուտը գալիս է
մահվանից հետո
 - Ա. Ողջամիտ
որդին

- Բ. Օգտակար
գիտելիքները
- Գ.
Շարունակական
բարեգործությունը
- Մզկիթների
կառուցումը
- 5. Մյուսներին ժպտալը
- 6. Նվերներ տալը
- 7. Մուսուլմանի
իրավունքները եղբոր
նկատմամբ
- Ա. Խաղաղ ողջույնն
ու ողջույնի
պատասխանը
 - Բ. Փոշտացողին
պատասխանելը
- 8. Աղբ հավաքելն ու
մաքրությունը

- 9. Պարտք չվճարող մարդուն ժամանակ տրամադրելն ու ներելը այն մարդուն, որը չի կարող վճարել
- 10. Ալլահին կոչ անելը
- 11. Մարդկանց դեպի Իսլամ և իրական Սուննա ուղղորդելը
- 12. Կնոջ հնազանդությունը ամուսնուն
- 13. Մարդուն և նրա ընտանիքին բարիք բերող աղոթքները
 - Աղոթքը տուն մտնելիս
 - Սեռական հարաբերությունն

երից առաջ արվող
աղոթքը

- 14. Այցելությունները
և մտերմությունները
հանուն Ալլահի
- 15. Սոցիալական
համագործակցության
արարքները
 - Ա. Որբերին
խնամելը
 - Բ. Այրիների և
կարիքավորների
մասին հոգ
տանելը
- 16. Բարությունը դեպի
կենդանիները
- 17. Պայքարն ու
պաշտպանությունը

Այլահի ճանապարհին
(Չիհեդ)

▪ 18.

Լավ վարվելաձև, որո
նց պիտի հետևի մո
լտվմանը :

- ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ
- Ին
- Կան մի քանի տե
սակի համբերությ
ուն.
- -
- -
- Վեճից խուսափել
ը.
- Գթասրտություն
և համբերատարու
թյուն .

- Պարտականությունների կատարում
- Ճշմարտություն
- Դիիրա / պատիվ /
- 8.ԲԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՄ
ՈՒՆՔ ԾՆՈՂՆԵՐԻՆ
- 9.
ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿ
ԱՆ ԿԱՊԵՐԻ Հ
ԱՍՏԱՏՈՒՄԸ
- -
- 11. ՀԱՅԵ /
համեստություն /
- -
- 19. ՆԵՐՈՒՄԸ

Դատաստանի Օրվա լավագույն պատրաստությունը

Հոգեբանական իրավունքները
պատկանում են հեղինակին,
բացի անվճար բանելու դեպքում
առանց որևէ փոփոխություններ
անելուվ գրքում:

«Եվ վերցրեք պատրաստությունը
(ձեր հետ) ճանապարհ, սակայն
լավագույն պատրաստությունը
դա Ատ-Տակվան է
(արդարություն, պատիվ, և
այլն)»:

(2: Ալ-Բակարա, 197)

«Պարզևի մասին իմացող
մարդկանց համար գործերը հեշտ
են»:

Իբն Ալջավզի նախնիներից մեկից
– (Ցանկալի պարսավանք)

«Գործերը ծանր են բոլոր
կողմներից, այն մարդկանց համար՝
ովքեր չգիտեն այդ գործերի
պտուղները»:

Իբն Ռաջար – (առաջին
ընտրություն)

«գիտելիքով է հեշտանում
երկրպագությունը»:

Իբն Ռաջար, նախնիներից մեկից
(նախկին աղբյուր)

«Հավատացյալը պետք է կոչ անի
և հետևի Ալլահի պարգևի
ուղղությանը... և չպետք է թույլ
տա իրեն տխրելու, քանի որ
կյանքի որոնումները դժվար են...
սակայն պետք է մխիթարվի գալիք
պարգևով... »

Իբն Սաադի – (Ճանապարհի
ճշմարտությունը)

Նվիրված է

Բոլոր մուսուլմաններին՝ ովքեր
ցանկանում են ճշմարիտ լինեն
ինքները իրենց, ընտանիքի
հասարակության հանդեպ,
Ալլահին ծառայելու համար,
Դրախտ գնալու լավագույն
հնարավորությունների

ձեռքբերման համար, և Ալլահի
դեկլարությամբ երջանիկ
լինելու համար այս և ապագա
կյանքում:

Ներածություն

Մուսոք

Նախարան

Մաս առաջին

Որոշ գերազանցություններով գործեր

1. Աղոթքի հետ կապված գործեր

· Ա. Գործեր աղոթքից
առաջ

- Բ. Մասջիդի
(Մզկիթի) հետ կապված գործեր
- Գ. Առավոտյան
աղոթքի Սուլենան (Ալ-
Դուհա աղոթքը)
- Դ. Գիշերային աղոթք
(Քիյամ աղոթքը)

2. Պահքի հետ կապված գործեր

- Ա. Ընդհանուր
կամավոր պահքը
- Բ. Աշուրա պահքը
- Գ. Շավվալ վեցօրյա
պահքը
- Դ. Առաֆա օրվա
պահքը

3. Ժամանակներն ու տեղերը,
որոնցում պարզև
կրկնապատկվում են և
աղոթքները ընդունվում են

• Ա. Ժամանակները,
երբ պարզև կրկնապատկվում է
և աղոթքները ընդունվում են

• Բ. Տեղերը, որոնցում
պարզև կրկնապատկվում է և
աղոթքները ընդունվում են

4. Հանդիպումներ հանուն Ալլահի.

5. Ալլահին հիշատակելը

• Ա.Ալլահին
գովարանելն ու փառավորելը
«Ալլահից բացի ոչինչ կա
երկրապագելու արժանի» բառերով

- Բ. «Չկա աստված, բացի Ալլահից» բառերը
- Գ. «Փառք Աստծուն, լրիվ գովքը լինի նրան, փառք Մեծն Աստծուն» բառերը
- Դ. «Փառք և գովք Աստծուն» բառերը
- Ե. «Փառք Աստծուն, լրիվ գովքը լինի Ալլահին, բացի Ալլահից չկա աստված և Նա մեծ է» բառերը
- Զ. «Փառք Աստծուն, և լրիվ գովքը լինի Նրան նրա արարման լիակատարությանը համարժեք, և Նրան համապատասխան, և

համապատասխան, նրան ,
 Է պատկանում
 արքայությունը և նրան ամբողջ
 փառքը և Նա ունի իշխանութ-
 յուն ամեն ինչի վրա գովաբանող
 բառերի միջուկին

• Է. «Չկա աստված,
 բացի Ալլահից, Նա գործընկեր
 չունի, Նրան է պատկանում
 Թագավորությունը, և Գովքը լինի
 նրանը, և Նա իշխանություն ունի
 ամեն ինչի նկատմամբ» բառերը

6. Հավաքույթի վճարը

7. Ալլահի հանդեպ վախը

8. «Ալլահին էլ է ինձ բավական»
 խոսքը, երբ երեխա է մահանում

· Ա. Գովաբանության
Տունը

· Բ. Երկու
կամ երեք երեխաների կորստի
համար պարզելը

9. Մարգարե Մուհամեդին
(խաղաղություն և Ալլահի
օրհնանքը լինի նրան) լսելը

10. «Խաղաղություն և Ալլահի
ողորմությունը Մուհամմեդ
Մարգարեին» խոսքը

11. Որոշ աղոթքներ և նրանց
գերադասելիությունը

· Ա. Աղոթք քնից
առաջ

- Բ. Աղոթք, երբ մարդը գտնվում է պարտքերի տակ և վտանգավոր դրությունում

12. Ղուրանի ընթերցումը

- Ա. Տադջիդի (հանգավորման) ուսուցանումը պարտադիր է

13. Ղուրանի անգիր անելն ու որոշ սուրաների (գլուխների) գերադասելիությունը

Մաս երկրորդ

Անորոշ շահերով արարքներ (Բարի գործեր, օգուտներ որոնք գալիս են մյուս կյանքում, ինչպես նաև Դատաստանի օրը):

1. Բարեգործությունը
2. Ծոմ պահողներին ուտելիք և ընթրիք տվող բարեգործը,..
3. Ծնողների իրավացիությունը
4. Արարքները պարգևատրվում են մահվանից հետո
 - Լավ որդին
 - Օգտակար գիտելիքներ
 - Շարունակական բարեգործությունը
5. Ժպիտ ուրիշներին
6. Նվերներ տալը

7. Մուսուլմանի իրավունքները եղբոր նկատմամբ

- Խաղաղ ողջույնն ու
ողջույնի վերադարձը
- Փոշտացողին
պատասխանելը
- Հիվանդներին
այցելելը
- Թաղման
արարողության մասնակցելը
- Օգնություն դժվար
կացության մեջ գտնվող
մուսուլմաններին

8. Աղբ հավաքելն ու մաքրությունը

9. Պարտքերը վճարելու ունակ
մարդուն ժամանակ տրամադրելն
ու պարտքը ներելը, եթե չի կարող
վճարել

10. Ալլահին կոչելը

11. Մարդկանց դեպի Իսլամ և
իրական Սուննա ուղղորդելը

12. Կնոջ ամուսնուն լսելը

13. Մարդուն և նրա ընտանիքին
բարիք բերող աղոթքները

14. Այցելություններն ու
մտերմություններ հանուն Ալլահի

15. Սոցիալական
համագործակցության արարքներ

• Ա. Որբերին խնամելը

• Բ. Այրիներին և այլ կարիքավորներին խնամելը

16. Բարությունը կենդանիների հանդեպ

17. Պայքարն ու պաշտպանությունը Ալլահի ճանապարհին (Ջիհեդ)

18. Լավ պահվածքը, որին պետք է հետևի մուսուլմանը

• Լավ բարոյականություն

19. Ներումը

Վերջաբան

Մուսք

Լրիվ փառքը Ամենագոր Ալլահին: Նա ասում է.

«Երգվում եմ նախերեկոյան
ժամով, որ մարդիկ կորուստներ
են կրում, բացի նրանցից, ովքեր
հավատում էին, ճիշտ արարքներ
էին անում, մեկը մյուսին
ճշմարտությունն էին
ծանոթացնում, և մեկը մյուսին
համբերատարություն էին սովորե
ցնում» (103, Ալ-Ասր, 1-3):

Մենք գովաբանում ենք
Նրան, և որոնում ենք Նրա
օգնությունն ու ներումը: Ես
վկայում եմ, որ չկա
աստվածություն, որը արժանի է
երկրպագման, բացի Ալլահից, և

Ես վկայում եմ, որ Մուհամմեդը
 Նրա ստրուկն ու առաքյալն է:
 Թող Ալլահը նվիրի Իր
 խաղաղությունն ու
 ողորմությունը Մուհամմեդին,
 նրա մաքուր ընտանիքին, նրա վեհ
 հետևորդներին, և նրանց՝ ովքեր
 հետևում են նրանց
 ճշմարտության մեջ մինչև
 Դատաստանի Օրը:

Ալլահի ողորմություններից մեկն է
 այն, որ Նա մեզ կանխորոշել է այն
 պարտավորությունները, որոնք
 հանդիսանում են կրոնի հիմքն ու
 հենարանը: Մուսուլմանները,
 որոնք հետևում են այդ
 պարտավորությունների
 կատարմանը, լուծել են իրենց

խնդիրները:

Պարտավորությունների ճշգրիտ կատարումը մոլսուլմաններին Դրախտ է տանում և խավարից դեպի լույս է տանում: Մարգարե Մուհամմեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է. «(Աստծո) ստրուկին Դատաստանի Օրը առաջին հերթին հարցնելու են աղոթքի մասին: Եթե այն ճշգրիտ է, ապա նրա բոլոր արարքները բարի են, սակայն եթե այն ճշգրիտ չէ և նրա պարտավորությունը լիակատար չէ, ապա Ալլահն ասում է, որ ստուգեն Իր ստրուկի բարի գործերը, և վերցրեք այնտեղից ու լրացրեք այն ինչ չի բավարարում նրա պարտավորությանը»:

Այդպիսով կամայական և բարի
գործերը լրացնում են
պարտավորությունները, և բացի
դրանից մեծ պարգև է
խոստացված դրանց
կատարողների համար: Չնայած
որ կամայական աշխատանքը
հեշտ է արվում, դրա համար
պարգևը հսկայական է:

Իմ մոլսուլման եղբայրներ ու
քույրեր, եթե ցանկանում եք, որ
ձեր աշխատանքը ընդունելի լինի
Ալլահի համար և լինի
պարգևատրելի, ապա դրա
համար գոյություն ունեն որոշ
պայմաններ:

Առաջին

պայմանը՝ մտադրություն Օմարն /Թող Ալլահը գոհանա նրանով /
ասել է. «Ես լսել եմ, որ Մարգարե
Մուհամմեդն (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
ասել է. «Գործերը միայն
մտադրություններին են
համապատասխան, և բոլորին
կտրվի նպատակներին
համապատասխան»: Ամեն
մուսուլման, որի գործերն ու
նպատակները մաքուր են Ալլահի
դիմաց, ազատ են
աներեսությունից ու
խարդախությունից, նրանց էլ Նա
կընդունի:

Երկրորդ պայմանը՝ բարի
գործերը պետք է կատարվեն
Աստծո պատվերին և Նրա
առաքյալի ղեկավարությանը
համապատասխան:

Բացի դրանից,
ցանկացած գործողություններ,
որոնք նման են
անհավատների և
Գրքի մարդկանց
գործողությունների,

չեն ընդունվի:

Բացի դրանից նորարար գործո
ղությունները,
կամ անձնական ցանկություննե
ր

բավարարող գործերը, **չեն ընդո
ւնվի:**

Աներեսի գործերը ժխտված են,
 քանի որ նրա նպատակները
 թաքցված են և նրա գտնվում է
 կրակի ամենացածր
 մակարդակում: Ամենագոր
 Ալլահն ասել է.

«Ճշմարիտ, աներեսները
 կհայտնվեն կրակի ամենացածր
 մակարդակում, և դու նրանց
 համար օգնական չես գտնի» (4:
 Ան-Նիսա, 145):

Ինչպես նաև նորարարական
 գործերը ժխտվում են, քանի
 որ աղավաղված էին, նույնիսկ
 եթե նպատակը բարի էր, ինչպես
 ասել է Մուհամմեդը
 (խաղաղություն և Ալլահի

ողորմությունը լինի նրան). «Եթե
 որևէ մեկը ներդրում է մեր
 գործերի մեջ այն ինչ կապ չունի
 նրանց հետ, ապա ժխտված
 կլինի»: Եվ Նա
 ասաց, «Ալլահը կպահպանի այն
 մարդու հնազանդությունը,
 ով իրականացնում է
 նորարարություն,
 մինչ նա խուսափում է» :/Ալ-
 Տադրիբ, և Ալ-
 Տադրիբ Շեյխ Ալ- Ալֆանիից:/

Այդ գիրքը գրված է եղել բոլորի
 համար, որպեսզի մեծ պարզևի
 արժանանա Ալլահից, **որպեսզի
 մեծացնի մեր բարի գործերը՝
 մեծարի ծառաներին և մոտեցնի**

նրանց Ալլահին: Ալլահը բոլորին
ասում է.

«Ճշմարիտ, մուսուլմանների
համար, հավատացյալ
տղամարդկանց և հավատացյալ
կանանց համար, ենթարկվող
տղամարդկանց և ենթարկվող
կանանց համար, ճշմարիտ
տղամարդկանց և ճշմարիտ
կանանց համար, համբերատար
տղամարդկանց և համբերատար
կանանց համար, խոնարհ
տղամարդկանց և
խոնարհ կանանց համար,
ողորմություն տվող
տղամարդկանց և
ողորմություն տվող կանանց
համար, ծոմ պահող

տղամարդկանց
 և ծոմ պահող կանանց համար,
 ողջամտությունը պահպանող
 տղամարդկանց և
 ողջախոհություն պահող
 կանանց համար և հաճախ
 Ալլահին հիշատակող
 տղամարդկանց և կանանց
 համար, Ալլահը ներում և մեծ
 պարգև է պատրաստել» (33:Ալ-
 Ահզաբ, 35):

Բացի դրանից, այդ
 բարեգործությունները
 կատարելով, մուսուլմանը
 կստանա Ալլահի աջակցությունը,
 հաղթանակը և
 ղեկավարությունը: Աբու
 Հուրայրան հայտնել է, որ Ալլահի

առաքյալը (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 ասել է. «Ամենագոր Ալլահն ասել
 է. «Ես պատերազմ եմ
 հայտարարում նրան՝ ով
 թշնամաբար է ընդունում Իմ
 ողջախոհ հավատացյալին: Եվ
 լավագույն բանը, որով Իմ
 ստրուկը մոտենում է Ինձ, դա իմ
 պատգամածն է, և Իմ ստրուկը
 շարունակում է մոտենալ Ինձ
 Նավաֆիլ (կամայական
 աղոթքներ կամ լրացուցիչ
 արարքներ, բացի պարտավորվ
 ածություններից) մինչ Ես նրան
 սիրում եմ, (այնքան ուժեղ, որ) Ես
 դառնում եմ նրա լսողությունը,
 որով նա լսում է, նրա հայացքը,
 որով նա տեսնում եմ, նրա ձեռքը,

որով նա հարվածում է , նրա
 ոտքը, որով նա կանգնում է, և եթե
 նա Ինձանից որևէ բան է
 խնդրում, ապա Ես իհարկե տալիս
 եմ նրան, և եթե նա Իմ
 պաշտպանությունն է որոնում
 (թաքստոց), Ես իհարկե
 պաշտպանում եմ նրան» (Ալ-
 Բուխարի):

Եվ վերջապես, մենք խնդրում ենք
 Ամենագոր, Ամենախոհ
 Ալլահին, և
 վերին գահի տիրակալին ընդու
 նել այս աշխատանքը և որ այն
 օգտակար լինի ամեն մուսուլմանի
 համար, **Ամեն:** Թող Ալլահից լինի
 այս գրքում եղած ամեն բարիքը,
 և ցանկացած սխալ,

ինձանից և Սատանայից,
Թող Ալլահը անիժի նրան /
: Փառք Ալլահին, աշխարհների
տիրակալին, խաղաղություն և
օրհնություն լինի
Մուհամմեդին մարգարեյին,
Աստծո բոլոր մարգարեներին և
նրանց հետևորդներին:

Հեղինակ- Խակամա Ա. Չուլմո
Ալ-**Ակիլի:** Էր-Բիադ, 16 Ապրիլի,
2005 թ.:

Նախաբան

Լրիվ Գովքը Ալլահին լինի, և ես
վկայում եմ, որ Ալլահից բացի չկա
աստվածություն արժանի

Երկրպագման,
 Առաջինի, Վերջինի, Ակնհայտի,
 Մշտականի,
 ունեցողի իմացությունն ամեն ին
 չում, և ես վկայում եմ,
 որ Մուհամմեդը Նրա ստրուկն ու
 առաքյալն է:

Հետագայում ես կմեջբերեմ որոշ
 պահեր, որոնք ընթերցողին
 կօգնեն գնահատել և հասկանալ
 այս գրքի օգուտը, որը
 նախատեսված է բոլոր
 մուսուլմանների համար:

Հայտնի է, որ ամենակարևորը դա
 մեր պարտադիտ
 պարտադրությունների լիովին
 կատարումն է՝ հինգ աղոթքներ,

զաքյաթ, **ծոմ և հաջ**: Այս գործերը
 մեզ տրված են համաձայն Ալլահի
 և Նրա առաքյալի պատգամին:
 Միրայուն ասվում է, որ մի մարդ
 Ալ Արաբ (**բեդուիններ**) եկավ
 մարգարե Մուհամեդի
 (**խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան**) մոտ և
 հարցրեց իր համար Ալլահի
 կողմից տրված պատգամների
 մասին: Մարգարեն նրան ասաց,
 որ Ալլահը պարտավորել է
 կատարել հինգ աղոթք, զաքյաթ
 (**ողորմություն**), Ռամմադանի
 ծոմը, և ուխտագնացություն
 (**հաջ**) դեպի Ալլահի Տուն: Լսելով
 դա, այդ մարդը բազմակի անգամ
 ասել է. «Ով Ալլահ, ես դրանից
 ավել կամ պակաս չեմ անելու»:

Երբ նա գնաց, Մարգարեն ասաց.
 «Նրան հաջողվեց դա, եթե նա
 չստեց» (փոխանցված է Ալ
 Շայխանի կողմից):

Մուսուլմանի ոգին միշտ
 փնտրում է ավելի լավ
 աշխատանք կատարելու
 հնարավորություն, **որպեսզի
 Ալլահից ստանա լավագույն
 պարգևը**: Հետևաբար գոյություն
 ունեն բարեգործությունների
 տարբեր մակարդակներ: Բարյր
 գնահատվող արարքները հեշտ
 չեն, **եթե Ալլահը չհեշտացնի
 դրանք**: Մեր պարտքը կարող է
 կատարված չլինի լիովին կամ
 ընդհանրապես չկատարված,
 երկու թշնամիների պատճառով,

որոնք միշտ հետապնդում են և
ամեն կերպ աշխատում են
մոլորեցնել և շեղել ճիշտ
ճանապարհից:

Առաջին թշնամին է անիծված
սատանան, որը երգվել է
մոլորեցնել Ադամի
հետնորդներին: Ալլահն ասում է.

«Նա ասաց. «Երգվում եմ քո
զորեղությամբ, որ ես
կգայթակղեմ բոլորին, բացի Քո
ընտրյալ (կամ անկեղծ)
ստրուկներից»» (38: Այգի, 82,83):

Այդպիսով սատանան միշտ
հնարավորություն է որոնում
չարիք մցնել մարդկության մեջ և
հանել Ալլահին երկրպագելուց:

Մարգարե Մուհամմեդը
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Սատանան գալիս է ձեզանից
 յուրաքանչյուրի մոր, որ
 մոլորեցնի, մինչ չգիտի թե ինչքան
 շատ է կքանիստ
 է արել աղոթելիս այդ մարդը»
 (Սահիհ Էլ Ջամեա): Սատանան
 միշտ աշխատում է շրջապատել
 ձեզ բոլոր կողմերից, ինչպես ասել
 է Ալլահը հետևյալ խոսքերով, որ
 ասել է սատանան.

**«Իսկ հետո ես նրանց
 մոտենալու եմ հետևից և
 առջևից, ձախից և աջից, և Դու
 նրանց մեծամասնությունը**

Երախտամոռ կճանաչես» (7: Ալ-Արաֆ, 17):

**«Նա ասաց. «Աստվա՛ծ, ինչու՞
ինձ մոյորեցրեցիր, ես
անմիջապես կհափշտակեմ
երկրայինն ու կվերադարձնեմ
նրանց բոլորին, բացի Քո
ընտրյալ (կամ անկեղծ)
սարուկներից» (15: Ալ-Հիջր,
39,40):**

Այսպիսով, տեղյակ եղեք
սատանայի ծրագրերի մասին,
թող Ալլահը ձեզ պաշտպանի
նրանից:

Երկրորդ թշնամին է
հանդիսանում հոգու ինքնակամ
դիմումը, որը տանում է

չթույլատրելի արարքների

կատարման: Տրվողները կրնան են բոցավառվող կրակների մեջ՝ ուր չեն ընկնի զսպվածները:

Մարգարե Մուհամմեդը

(խաղաղություն և Ալլահի

ողորմությունը լինի նրան) ասել է.

«Խելամիտ մարդը դա այն մարդն է, որը ինքն իրեն է մեղադրում և պատրաստվում Դատաստանի Օրվանը, իսկ հիմար մարդը նա է, ով հետևում է իր ոգու

ցանկություններին, որոնք

պետքական չեն Ալլահի համար»:

(Ատ-Տիրմիդի)

Տեղեկացված է նաև, որ Օմարն ասել է. «Հաշվի առեք ձեզ, քանի հաշվի չեք առված, կշռադատեք

ձեզ, քանի դեռ կշռադատված չեք
և պատրաստվեք Դաստաստանի
Օրվանը, երբ կքննվեք և ոչինչ չի
թաքցվի»:

Պարտադիր
պարտավորություններ են
Մուհնայի պարտադրանքները,
որոնք խորհուրդ է տվել
Մուհամմեդը (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի
նրան), որպեսզի լրացվեն ոչ
լրիվներն ու ավելանան բարի
գործերն ու պարգևները:

Գոյություն ունեն շատ խոսքեր ու
արարքներ, բացի նրանցից որոնք
պարտադրել է Ալլահը, որոնք
օգնում են մուսուլմաններին
ստանալ ավելի մեծ պարգև, ջնջել

մեղքերն ու ավելի մոտենալ

Ալլահին: Այդպիսի գործի օրինակ
է կամայական աղոթքը
հիմնականն անելուց հետո, որը
դրել է Ալլահը,

բարեգործությունները,

կամայական պահքը, **Ումրա**

կատարելը և այլն:

/Այս սուլնանները հեշտ են մուս
ուլմանների մաքուր հոգիների
համար/:

Ինչքանով ինձ հայտնի է,

կամավոր աշխատանքի ու

սուլնայի մասին

տեղեկությունները տարածված

են շատ գրքերում: Այդպիսով

փորձեցի հավաքել **(հնարավորինս
շատ)** տեղեկություններ մի

գրքում, որպեսզի այն
հեշտությամբ հասանելի լինի
բոլոր մուսուլմանների համար և
ծառայի նրանց ամենօրյա
կյանքում: Ես այդ գիրքը
բաժանեցի երկու հիմնական
մասերի: Առաջին մասը նվիրված է
բարի գործերին, որոնց համար
նշված են պարգևներ: Այդպիսի
գործերի օրինակ է Սուննայի
աղոթքն ու Ումրայի կատարումը:
Երկրորդ մասը նվիրված է այն
բարի գործերին, որոնց
օգուտները անորոշ են, նրանց
բնութագրմանը, որոնցից օգուտը
տարածվում է ամբողջ
ընտանիքին, հարևաններին և
նույնիսկ լրիվ հասարակությանը:
Այդ առավելություններին

հասնում են այս կյանքում և
Վերջին Օրը: Բարեգործությունն
ու օգտակար գիտելիքները
հանդիսանում են այս խմբի բարի
գործերի օրինակներ:

Ուշադրություն դարձրեք, որ կան
բարի գործերի դասակարգման մի
քանի առավելություններ, **որոնք
համապատասխանում են տվյալ
առավելությանը**: Օրինակ՝ այդ
դասակարգումը օգնում է
մուսուլմաններին ընտրել բարի
գործը, **որից օգուտն ու պարգևը
ավելի բարձր է**: Նաև այն օգնում է
որոշել բարի գործերի ապագան
(**հետևանքները**) նրանց
կարևորության աստիճանով,
օգուտով ու պարգևով: Բացի

դրանից այն օգնում է
մուսուլմաններին դասակարգել
բարի գործերը տեղին
ուժամանակին
համապատասխան: Այս գրքում
ես մեջբերել եմ Սուրբ Ղուրանը,
մարգարեական սովորույթներ և
գիտնականների ու ընկերների
խոսքեր ինչքան, որ կարողացա
Վերջապես, հուսում եմ, որ
ընթերցողները սխալ գտնելու
դեպքում գրություն կամ
խորհուրդ կուղարկեն հետևյալ
հասցեով.

11521 Էր-Րիադ 41066

@:

Advisor07@hotmail.com

Մենք աղոթում ենք Ալլահին
 պարզեցնել մեզ և բոլոր
 մուսուլմաններին այս գրքի
 համար և ուսանելու համար: Թող
 Ալլահը ների մեր մեղքերը և մեզ
 ճիշտ ճանապարհի ուղղի: Ինչպես
 նաև աղոթում ենք, որ նա
 օրհնություն և խաղաղություն
 տա Իր Մարգարեին, նրա
 մաքուր ընտանիքին,
 պատվարժան հետևորդներին,
 ինչպես նաև նրանց, ովքեր
 հետևում են նրանց
 ճշմարտության մեջ, **մինչ**
Դատաստանի Օրը:

Մաս առաջին

Որոշված առավելություններով պարտավորություններ

1. Աղոթքի հետ կապված
պարտավորություններ

Ա. Պարտավորություններ աղոթքից առաջ.

1- Լվացումը

Լվացումը մաքրում է մեր
մարմինն ու հոգին մեղքից ու
մեղավորությունից:

Փոխանցված է, որ Աբու
Հուրայրան ասել է, որ Ալլահի
առաքյալն (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
ասել է. «Երբ ստրուկը լվացվում է
ամեն մեղք, որի մասին նա

մտածում է, ջրով կմաքրվի նրա երեսից կամ ջրի վերջին կաթիլով, և երբ նա ձեռքերն է լվանում, ամեն կատարված մեղք կմաքրվի նրա ձեռքերից ջրով կամ ջիր վերջին կաթիլով, և երբ նա ոտքերն է լվանում, ջրով կամ ջրի վերջին կաթիլով կմաքրվի ամեն մեղք որի նա մոտեցել է, այնպես որ նա մաքուր դուրս կգա ամեն մեղքից» (Մուսուլման):

Փոխանցված է, որ Խոլմրանն ասել է, որ Ուսման իբն Աֆֆանն ասել է, որ Ալլահի առաքյալն (խաղաղություն և աղղահի ողորմությունը լինի նրան) ասել է. «Աստծո հրամանին համապատասխան լվացվողն

աղոթելով է լվանում իր
կատարած մեղքերը»

(Մուսուլման): Ինչպես նաև
փոխանցված է, որ Օսմանն ասել
է. «Ես լսում էի, թե ինչպես Ալլահի
առաքյալն ասաց. «Լվացումը
լիակատար անողն ու դրանից
հետո մարդկանց հետ
հավաքույթուն կամ մզկիթում
աղոթողոդին ներվում են բոլոր
մեղքերը Ալլահի կողմից»»

(Մուսուլման): Ալլահի մեծ
առատաձեռնությանը է դրվել
լվացումը, **որպեսզի մենք ամեն օր
մաքրվենք**: Բացի դրանից
լվացումը դա աղոթքի
պահանջներից մեկն է, **քանի որ
առանց լվացման աղոթքը հաշվի
չի առնվում**: Եթե ջրի

օգտագործումն անհնար է, **ապա
թուլյատրվում է լվացումը
կատարել ավագով:** Փոխանցված
է, որ Աբու Հուրայրան ասել է, որ
Ալլահի առաքյալն
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է.
«Դատաստանի օրը ձեր
երեսները, ձեռքերն ու ոտքերը
փայլուն են լինելու հետևողաբար
լվացում կատարելու պատճառով,
այնպես որ, ամեն ինչ արեք,
որպեսզի մեծացնեք գլխի,
ձեռքերի և ոտքերի փայլը»
(Մուսուլման):

**2-Սիվակ (Արակ կոչվող
ատամի ձողիկ)**

Միվակը հանդիսանում է մեր
 մարգարե Մուհամմեդի
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան)
 սուննան, և դա նրա բնագոյային
 վարվելակերպի լրացումն էր:
 Մարգարե Մուհամմեդը
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) կոչ էր
 անում իր կողմնակիցներին
 օգտագործել դա մանավանդ
 աղոթքից առաջ: Դա կապված է
 նրա հետ, որ Աբու Հուրայրան
 տեղեկացրել է, որ մարգարեն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Եթե դա դժվար չլիներ
 իմ հավատացյալների համար ա
 զգից, ապա ես կիրամայեի, որ

օգտագործեն ամեն աղոթքից
 առաջ» (Մուսուլման): Սիվակը
 մաքրում է
 մուսուլմանի բերանները և
 ստեղծում է հաճելի հոտ Ալլահի
 հետ հանդիպման ժամանակ, երբ
 նա աղոթում է, և չի գրգռում
 հրեշտակներին ու
 մուսուլմաններին, որոնք աղոթում
 են տե՛հ հոտի մոտակայքում:
 Բացի դրանից, սիվակը բարձր է
 պարզեցատրվում, ինչպես դա
 փոխանցված էր Աիշայից: Նա
 ասել է, որ Մարգարեն ասում էր.
 «Սիվակը մաքրում է բերանի
 խոռոչն ու հաճելի է Աստծո
 համար» (Սահիհ Ալ-Բուխարի):

Բ-Մասջիդի (մզկիթի) հետ կապված պարտավորություններ

1-Մզկիթ այցելելը

Փոխանցված է, որ Աբու
Հուրայրան ասել է, որ Ալլահի
առաքյալն (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
ասել է. « Եթե մարդը լվացում է
անում տանը, իսկ հետո գնում է
Ալլահի տներից մեկը, որպեսզի
կատարի որևէ
պարտավորություն,
դրված Ալլահից, ապա նրա
յուրաքանչյուր քայլ մաքրելու է
նրա մեղքերը և կդարձնի
նրան առաքինի» (Մահիհ

Մուսլիմ): Աբու Հուրայրան
 տեղեկացրել է, որ Մարգարեն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Եթե մարդը գնում է մզկիթ
 (ատղժքին մասնակցելու համար),
 Ալլահը նրա համար տոն է
 պատրաստելու Դրախտում
 այնքան հաճախ՝ ինչքան նա
 գնում է այնտեղ ու
 վերադառնում» (

Այս մասին պատմել են Ահմեդ,
 Բուխարի, Մուսլիմ): Իսկապես,
 օրեկան հինգ անգամ մզկիթ
 այցելելը ավելացնում է մեր
 պարզևն ու մաքրում մեղքերը:
 Այդ պատճառով լավագույն
 տներն են մզկիթից ամենահեռու
 գտնվողները: Գոյություն ունի

Սալամի որդիների պատմություն,
 որոնք ուզում էին իրենց տները
 կառուցել մզկիթի մոտ, և երբ
 Մարգարեին հայտնեցին այդ
 մասին, նա ասաց. «Ինձ
 հայտնեցին, որ դուք ուզում եք
 մզկիթի մոտ կառուցեք ձեր
 տները»: Նրանք ասացին. «Այո,
 Աստծո Մարգարե, մենք
 ցանկանում էինք»: Մարգարեն
 ասաց. «Սալամի որդիներ, ձեր
 տների տեղերը որոշում են ձեր
 պարզևները»: (Մուսուլման): Նա
 նաև փոխանցեց Աբու Մուսայից,
 որ Ալլահի առաքյալն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Աղոթքի համար հսկայական
 պարզև ստացող մարդիկ, դա

ամենահեռուներն են (մզկիթից),
 իսկ հետո հաջորդները և այդպես
 շարունակ: Ինչպես նաև նա՝ ով
 սպասում է, որ աղոթի իմամի հետ
 և ստանում է ավելի մեծ պարգև
 քան նա՝ ով աղոթում է ու գնում
 քնելու» (Բուխարի):

2- Մաքրումն ու հնազանդությունը դեպի մզկիթ ճանապարհին և աղոթքի ժամանակ.

Իսլամը հանդիսանում է մաքրման
 կրոն, և ինչպես գիտենք, որ հոգու,
 սրտի ու մարմնի մաքրումը
 պահանջվում են մուսուլմանից
 ամբողջ տարվա ընթացքում,
 մանավանդ մզկիթներում: Մենք

պետք է մաքուր լինենք և կրենք
լավագույն, մաքուր հագուստը և
օգտվենք օժանելիքներից (միայն
տղամարդկանց համար), երբ
հավաքվում ենք մզկիթում:

Ալլահին Ամենաբարձյալը ասում է.

«Ով Ադամի որդին՝ Կրեք ձեր
զարդերը ամեն մզկիթում: Կերեք
և խմեք, սակայն մի շեղվեք, քանի
որ Նա չի սիրում շեղվածների»
(7:Ալ.Արաֆ, 31):

Դժբախտաբար այս օրերում մենք
նկատում ենք, որ շատ
երկրպագուներ հավաքվում են
մզկիթում տհաճ հոտով, որը
դուրս է գալիս քրտնքից,
յուղից և կեղտոտ զուգագուլպա

ներից, ինչն էլ վնասում է մյուս
 հավատացյալներին, **խախտում**
նրանց հանգիստն ու
կողմնորոշվածությունը աղոթքի
ժամանակ: Մարգարե
Մուհամմեդը (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
 նկարագրել է աղոթքը Բիլալին,
 որը կոչ արեց աղոթքի. «**Ով Բիլա,**
հանգստացրու մեզ աղոթքով»:
 Որպեսզի պատրաստվի աղոթքի
 համար, մարգարեն հրամայեց մեզ
 գնալ մզկիթ, **լինելով խաղաղ և**
հանգիստ: Դա փոխանցված է
 Աբդուլլահ իբն Աբու Կատադից.

Հայրս ասաց. «**Երբ մենք աղոթում**
էինք Մարգարեի հետ, նա լսեց, թե
ինչպես որոշ մարդիկ աղմկում են:

Աղոթքից հետո նա ասաց. «

Ի՞նչ է պատահել,»

Նրանք պատասխանեցին.

»Մենք շտապում էինք աղոթքի:

« Նա ասաց.«Մի շտապեք

աղոթելու համար, և երբ գալիս եք

աղոթելու, դուք պետք է գաք

հանգստությամբ, և աղոթել

ինչքան, որ մնացել է (մյուսների

հետ) և ավարտել մնացածը, որ

բաց եք թողել» (Բուխարի):

Մտածելով այս հադիսի մասին,

նկատում ենք, որ մարգարեն

ասում է ընդհանուր աղոթքից

առաջ հանգստության մասին:

Քանի որ,

ընդհանուր աղոթքը ունի մեծ

հաջողություն, մանավանդ /
Տաքֆիի բացումով/:

3-Աղոթքի կանչը (Ազան)

Ազանը աղոթքի ժամի
հայտարարումն է, որը
համարվում է իսլամական
ամրության ու նշանը այդ տեղում:
Ինչպես նաև համարվում է
Աստծո խորհրդանիշներից
մեկի ապացույցը: Աղոթողները
պատասխանատու են աղոթքի
ժամանակի որոշման գործում,
որն էլ սկսվում է կանչով
(Ազանով) և
մուսուլմանները սկսում են աղ
ոթել
, իսկ պաա պահել ցանկացողն

երբ սկսում, **կամ ավարտում են պասը:** Աղոթողների աղոթքն ու կոչը մեծ բարիք է, ինչպես դա ասված է հադիսում, որը փոխանցել է Իսա իբն Տալիհան ասելով, որ նստած էր Մուավիա իբն Աբու Սուֆյանի հետ, **երբ կոչողը հնչացրեց ի աղոթք կոչը:** Մուավիան ասաց.՝ Ես լսել եմ , որ Ալլահի Մարգարեն /խաղաղություն և օրհնությունը Ալլահի ի լինի նրան/ ասաց. « **Նրանք , ովքեր կոչում են Աղոթքի կունենան ամենաերկար պարանոցները Հարության օրը» (Մուսուլման):** Մուսուլմաններից պահանջվում է , աղոթել, լսելով Ազան , ինչպես որ ասել է Ջաբիրը, որ

Աղղահի Ալլահի առաքյալն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Նա՛ ով Ազան լսելուց ասում է.
 «Ով Ալլահ, այս լիակատար կանչի
 և կայանալիք նամազի (աղոթքի)
 Աստված (որ չունես
 գործընկերներ), տուր
 Մուհամմեդին ելույթի ու
 առավելության իրավունք, և
 ուղարկի նրան (Դատաստանի
 Օրը) Դրախտի ամենալավ ու
 ամենաբարձր տեղեր, **որ**
խոստացել էիր նրան: Իսկ
 այնուհետև թող, որ նա կիսնդրի
 իմ համար Համբարձման Օրը»
 (Ալ-Բուխարի): Ասելով դա կարելի
 է ստանալ Մուհամմեդի
 (խաղաղություն և Ալլահի

ողորմությունը լինի նրան)
բարեխոսությունը Դատաստանի
Օրը, թե Աստված տա՛, **որտեղ
բոլորը դրա կարիքն ունեն:**

4-Միասնական աղոթքը (Հավաքույթ)

Աբու Հուրայրան տեղեկացրել է,
որ մի կույր մարդ եկավ Ալլահի
առաքյալի (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
մոտ ու ասաց. «Ով Ալլահի
առաքյալ, ես ոչ մեկի չունեմ, որ
ինձ մզկիթ ուղեկցի»: Այդպիսով
փորձում էր նաև թույլատրություն
ստանալ տանը աղոթելու համար:
Նա ստացավ այդ
թույլատրությունը: Երբ այդ կույր

մարդը շրջվեց, նա կանչեց նրան
 ու ասաց. «Դուք լսու՞մ եք
 Ազանը»: Պատասխանը
 հաստատական էր: Ալլահի
 առաքյալը (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 հրամայեց նրան, որ
 պատասխանի Ազան լսելուց
 (Մուսուլման): Աբու Հուրայրան
 հայտնել է, որ Ալլահի առաքյալն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Երդվում եմ Նրանով՝ ում
 ձեռքերում իմ կյանքն է, որ ես
 որոշլ անգամներ մտածում էի
 հրաման տայի, որ ծղոտներ
 հավաքեն, իսկ հետո Ազանը
 նշանակեի նամազի համար: Այդ
 ժամանակ կհրամայեի իմամին

նամագ կատարել, իսկ այնուհետև
այցելել նրանց տները՝ ուլքեր չեն
եկել մզկիթ միասնական
աղոթելու համար և այրել նրանց
տները» (Ալ-Բուխարի և
մուսուլման): Այս մեջբերումից
պարզ է, որ միասնական աղոթքը
պարտադիր է, բացառությամբ
այն դեպքերի՝ երբ կա հարգելի
պատճառ՝ հիվանդություն,
կույրություն և այլն: Բացի
դրանից միասնական աղոթքին
բացակայելը բերում է մեծ
պարզկենների բացակայության:
Փոխանցված է, որ Աբդուլլա բին
Օմարը հայտնել է, որ Ալլահի
առաքյալը (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
ասել է. «Մզկիթում կատարած

աղոթքը քսանյոթ անգամ
գերազանցում է միայնակ
կատարված աղոթքին» (Ալ-
Բուխարի):

5-Աղոթքի շուտ գնալը

Փոխանցված է, որ Աբու
Հուրայրան ասել է, որ Ալլաքի
առաքյալն (խաղաղությունը և
Աղղահի ողորմությունը լինի
նրան) ասել է. «Եթե մարդիկ
իմանային, որ աղոթքի կոչում և
առաջին շարքում լինելը ասես
վիճակահանությունում հաղթած
լինելն է: Եվ եթե իմանային
կեսօրվա աղոթքի համար
պարգևի մեծությունը, ապա
վազելով կգնային: Եվ եթե

իմանային մզկիթում արվող
գիշերային և առավորյան աղոթքի
համար պարգևի մեծությունը,
ապա նրանք կմիանային
աղոթողներին, նույնիսկ եթե
ստիպված լինեին սողալ»

(Մուսլիմ): Մուհամմեդի
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) այս
խոսքից պարզ է դառնում, որ
աղոթքի համար շուտ գնալն ու
առաջին շարքում աղոթելը մեծ
պատիվ է: Փոխանցված է, որ
Աբու Հուրայրան ասել է, որ
Ալլահի առաքյալն
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է.
«Աղոթող տղամարդկանց համար
լավագույն շարքը դա առաջինն է,

իսկ ամենավատը՝ վերջինը: Եվ
աղոթող կանանց համար
լավագույն շարքը դա վերջինն է,
իսկ ամենավատը՝ առաջինը»
(Մուսլիմ):

**-Աղոթքի համար շուտ գնալը՝
մանավանդ ուրբաթօրյա
աղոթքի**

Հայտնի է, որ ուրբաթ օրը
համարվում է շաբաթվա
լավագույն օր, քանի որ այն ունի
հատուկ և մեծ արժեք:

Փոխանցված է, որ Աբու
Հուրայրան տեղեկացրել է, ու
մարգարեն (խաղաղություն և
Ալլահի ողորմությունը լինի նրան)
ասել է. «Լավագույն օրը, երբ

արևը ծագում է դա ուրբաթ օրն է,
 քանի որ այդօրը ստեղծվեց
 Ադամը, այդ նույն օրը նա
 հայտնվեց Դրախտում, այդ նույն
 օրը նա արքայվեց այնտեղից, և
 Դատաստանի Օրը ուրբաթ է
 լինելու» (Մուսլիմ): Եվ
 փոխանցված է, որ Աբու
 Հուրայրան ասել է, որ
 Մուհամմեդն (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 ասել է. «Մենք վերջիններն ենք,
 բայց մենք առաջինները կլինենք
 Դատաստանի Օրը, և մենք
 առաջինը Դրախտ մտնողները
 կլինենք, չնայած մյուս երկրերին
 գրությունը տրվել է մինչ մեզ
 տրվելը: Բայց նրանք փոխվել են և
 այդ պատճառով Աստվածը մեզ

Ճշմարտությանը է լցրել, **որը**
նրանք չեն ընդունում: Նրանց
 հրամայված էր նշել այդ օրը,
 սակայն նրանք տարբերվում են
իրարից դրանում: Այդպիսով
 Աստված մեզ նրա մոտ տարավ ու
 ասաց. «Ուրբաթը՝ մեր համար,
 հաջորդ օրը՝ հրեաների համար,
 իսկ դրա հաջորդ օրը՝
 քրիստոնյաների համար»
(Մուսլիմ):

Այդ օրը Ալլահը նշեց ուրբաթ
 օրվա աղոթքը: Ամեն շաբաթ
 մուսուլմանները աղոթում են և
 հանդիպում, **որպեսզի ելույթներ**
ու քարոզներ լսեն: Ալլահը մեծ
 պարգև է խոստացել այն
 մուսուլմանների համար, **որոնք**

այցելում են ուրբաթ օրվա
 աղոթքներին վաղ առավոտյան:
 Փոխանցված է, որ Աբու
 Հուրայրան ասել է, որ Ալլահի
 աստաքյալն (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 ասել է. «

Ցանկացած մեկը, ով լոգանք է
 ընդունում ուրբաթ օրը
 , ինչպես Ջանաբի լոգանք, ,
 այնուհետև աղոթողները
 (առավոտյան) հավասար են ուղտ
 զոհաբերողների: Երկրորդ ժամին
 գնացողը հավասար է կով
 զոհաբերողի, իսկ երրորդ ժամին
 գնացողը հավասար է պոզավոր
 ոչխար զոհաբերողի, իսկ եթե
 գնում է չորրորդ ժամին, ապա նա
 հավասար է հավ զոհաբերողի, և

հինգերորդ ժամին գնացողը,
 ապա դա ասես այդ մարդը ձվեր
 առաջարկեր: Երբ Իմամը դուր
 ս է գալիս, Հրեշտակները իջնում
 են, որ լսեն ուրբաթ օրվա
 քարոզը» (Ալ-Բուխարի):
 Փոխանցված է նաև, որ Սալման
 Ալ-Ֆարասին ասել է, որ Ալլահի
 առաքյալն (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 ասել է. «Ուրբաթ օրը լողացողը
 մաքրում է իրեն ինչպես կարող է,
 այնուհետև ձեթ է օգտագործում
 (մազերի համար) կամ իր տան
 հոտն է ցանում վրան, այնուհետև
 գնում է (մզկիթում աղոթելու), և
 չի առանձնացնում կողքի երկու
 աղոթողներին, կատարում է
 աղոթքը այնքան ինչքան պետք է,

իսկ այնուհետև լռում է մինչ
 իմամը ավարտում է քարոզը,
 ապա այդ մարդու անցած ուրբաթ
 օրվանից մինչև այդ ուրբաթ օրը
 կատարած մեղքերը ներված են
 լինելու» (Ալ-Բուխարի):

6-Մշտական սուննաները

Հիմնականում մեր աղոթքները
 լիակատար չեն քանի որ բաց են
 թողնվում կարևոր մասեր՝
 սուննաներ կամ հիշողություններ
 ամենօրյա կյանքի խնդիրների
 մասին, որոնք խանգարում են մեր
 աղոթքներն ու հանգստությունը,
 կամ ել սատանայի մրմունջները:
 Ինչպես գիտենք, աղոթքների
 համար տրվող պարգևները

շատանում կամ քչանում են
 աղոթքի լիակատարության
 պահանջի պատճառով,
 բաղադրության ու հանգստի
 պատճառով և ավանդույթներին
 հետևելու պահանջի պատճառով:
 Մուհամմեդն (խաղաղություն և
 Ալլահի ողորմությունը լինի նրան)
 ասել է. «Արեք ձեր աղոթքները
 այնպես՝ ինչպես ես եմ անում»
 (Ալ-Բուխարի): Ասել է նաև.
 «Սովորաբար, երբ ծառան
 ավարտում է աղոթքն ու
 հեռանում, նրա աղոթքների
 պարզևները չեն գրանցվելու
 միայն կեսով, մեկ երրորդով, մեկ
 քառորդով, մինչ նա ասի միայն
 մեկ տասերորդ մասը»: Այդ
 պատճառով, որպեսզի լրացվեն

Մուհամմեդը (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) սուննաներ է նշանակել, որոնք կարելի է կատարել աղոթքից առաջ կամ հետո: Դա տասերկու աղոթքներ են՝ ցերեկ և գիշեր: Այդ սուննաները կատարվում են հետևյալ կերպ.

- Երկու աղոթքները մինչ առավոտյան աղոթքը: Ահշան ասել է, որ մարգարեն ասել է. «Առավոտվա այդ երկու աղոթքների կքանատումը, ավելի լավ են, քան այս կյանքն իր ամեն ինչով» (Մուսլիմ):
- Չորս աղոթքների կքանատում կեսօրվա աղոթքից առաջ և

Երկուսը դրանից հետո: Ահշան ասել է. «Ալլահի առաքյալն իր տանը կատարում էր չորս աղոթք կքանատում կերօրյա աղոթքից առաջ, այնուհետև դուրս էր գալիս, որ մարդկանց աղոթքի տաներ, իսկ այնուհետև վերադառնում էր, որ կատարի մյուս երկու կքանատումները .աղոթքները»:

- **Երկու կքանիստների աղոթքներ երեկոյան աղոթքից հետո:** Ահշան ասել է. «Ալլահի առաքյալը տանում էր մարդկանց երեկոյան աղոթքի, իսկ այնուհետև վերադառնում էր, որ կատարի երկու կքանիստ աղոթք»:

- Երկու աղոթք գիշերային
աղոթքից հետո: Ահշան ասել է.
«Ալլահի առաքյալը տանում էր
մարդկանց գիշերային աղոթքի,
իսկ այնուհետև վերադառնում, որ
կատարի երկու աղոթք»:

Աղոթքի սուննաները լրացուցիչ
պարզևի համար ունեն ևս մի
առավելություն՝ հանդիսանում են
Դրախտ մուտք գործելու միջոց,
ինչպես փոխանցված է, որ Ումմ
Հաբիբան՝ մարգարեի կինն ասել
է, թե լսել է, որ Ալլահի առաքյալն
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է.
«Ամեն մուսուլման, որը անում է
ամեն օր տասներկու
լրացուցիչ աղոտք կքանիստեր

պարզևատրված է լինելու տնով,
 որը լինելու է Դրախատում»։ Կամ
 «Նրա համար Դրախատում տուն է
 կառուցվելու» (Մուսլիմ)։ Բացի
 դրանից երեկոյան աղոթքից
 առաջ չորս կքանիստ
 աղոտքը ունի առավելություն,
 ինչպես Մուհամմեդն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) է ասել.
 «Ալլահը ողորմած է այն մարդուն
 որը
 անում է չորս կքանիստ աղոտք
 Ասսեր (երեկոյան աղոթք)
 կատարելուց առաջ» (Աբու
 Դաուդ և Ատ-Տիրմիդի)։

Ավելի գերադասելի է շատ
 աղոթելը, քանի որ այն

բարձրացնում է աղոթողի
պատիվը Ալլահի դիմաց:

Փոխանցված է, որ Սաուբան՝
առաքյալի (խաղաղությունն
Ալլահի ողորմությունը լինի նրան)
կողմից ազատված ստրուկն ասել
է. «Ես հարցրեցի առաքյալին այն
գործի մասին, որը կատարելիս
հնարավորություն կունենամ
Դրախտ մտնել: Մարգարեն
ասաց. «Հաճախ խոնարհվիր
Աստծուն, քանի որ ամեն մի
խոնարհ ջնջում է մի մեղք»
(Մուսլիմ): Նաև փոխանցված է,
որ Ռաբիա բին Ալաալամ Կաաբն
ասել է. «Ես գիշեր էի անց
կացնում Մուհամմեդի հետ, և այն
բանից հետո, երբ ծառայում էի
նրան լվացումից հետո նա ինձ

հարցրեց, արդյոք ունենա՞նք որևէ
խնդրանք, և ես պատասխանեցի,
որ ուզում եմ լինել նրա ուղեկիցը
Դրախտում: Այդ ժամանակ նա
պատասխանեց, թե ունե՞ն նաև
ուրիշ խնդրանք, սակայն ես
ասացի, որ չունենմ, և նա ասաց որ
խնդրեմ խոնարհվելով»

(Մուսլիմ): Ստրուկը խնդրում է
Աստծուց խոնարհվելով, ինչպես
ասաց մարգարեն. «Աստծո
ստրուկը մոտենում է իր Աստծուն,
երբ խոնարհվում է, այնպես որ
ավելացրեք ձեր աղոթքների
տևողությունը» (Մուսլիմ):

7-Աղոթքների ընդմիջման
ընթացքում մզկիթում լինելը

Մեծ նշանակություն ունի մզկիթում գտնվելը աղոթքների ընդմիջման ընթացքում, քանի որ Մուհամմեդն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է. «Ալլահի ստրուկը աղոթող է համարվում մինչ գտնվում է մզկիթում և սպասում է աղոթքին և հրեշտակներն ասում են. «Ով Աստված, օրհնիր նրան, բարի և ողորմած եղիր նրա նկատմամբ», մինչ նա մնում է աղոթավայրում և գնում է հետքերով» (Մուսլիմ):

Գոյություն ունեն նաև այլ շատ սովորույթներ, որոնք պարունակում են վերոնշյալ թեմաների պես թեմաներ՝ ինչպիսիք են Աբու Հուլայրայի պատմածը, երբ Ալլահի առաքյալն

(խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Մզկիթում կատարվող աղոթքը
 (գնահատվում է) քսանհինգ
 անգամ ավել, քան տանը
 միայնության մեջ կամ
 աշխատավայրում կատարվողը,
 քանի որ տանը լիակատար
 կերպով լվացում անելն ու մզկիթ
 գնալը աղոթելու նպատակով,
 ամեն քայլի հետ ջնջվում է մի
 մեղք, **մինչ մզկիթ մտնելը**: Երբ նա
 մտնում է մզկիթ, ապա
 համարվում է աղոթող, մինչ նա
 սպասում է աղոթքին և
 հրեշտակները խնդրում են
 Ալլահից ներողամտություն նրա
 համար ու շարունակում են
 կրկնել. **«Ով Աստված, օրհնի**

նրան, բարի և ողորմած եղիր նրա
 նկատմամբ», մինչ նա մնում է
 աղոթավայրում և գնում
 հետքերով»: Աբու Հուրայրան
 հայտնել է, որ Ալլահի առաքյալն
 (խաղաղություն և Ալլահի
 ողորմությունը լինի նրան) ասել է.
 «Ասե՛մ թե ինչի օգնությամբ է
 Ալլահը ջնջում ձեր մեղքերն ու
 վերադարձնում շարքերը
 (Դրախտում)»: Հետևորդներն
 ասացին. «Իհարկե, ով Ալլահի
 առաքյալ»: Նա ասաց. «Լավ
 կատարեք վուդուն, չնայած
 իրավիճակին, անելով ավելի շատ
 քայլեր դեպի մզկիթ աղոթք
 անելու համար,
 սպասելով մյուս աղոթքին և ս

ա առ-Ռիբատ է, և սա առ-
Ռիբատ է:» (Մուսլիմ):

-Առավոտյան աղոթքից հետո
մզկիթում մնալն ու երկու
և երկու կքանիստ աղոթելը .
արևի ելնելուց հետո:

Փոխանցված է Անաս բին
Մալիկից, ու Մուհամմեդն
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է.
«Ով կատարում է առավոտյան
աղոթքը մզկիթում, իսկ
այնուհետև նստում է, որ
փառաբանի Ալլահին մինչ
մայրամուտը, իսկ հետո անում է
երկու, կքանիստները, ապա նրա
պարզևը հավասար է Հաջի և

Ումրայի: Նա ասաց, որ Ալլահի առաքյալն ասել է. «ավարտ, ավարտ, ավարտ»» (Ատ-Տիրմիդի):

Գ. Կեսորվա աղոթքի սուլնան (Ադ-Դուհա աղոթքը)

Փոխանցված է, որ Չաիդ իբն Ակրամը տեսել է, թե մարդիկ ինչպես են կատարել միջօրեյի աղոթքը և ասել. «Մի՞թե նրանք չգիտեն, որ ավելի լավ է աղոթել ուրիշ ժամանակ»: Ալլահի առաքյալն (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) ասել է. «Նվիրվածների աղոթքը դա արևի լրիվությանը բարձրացած ժամանակն է»

(Մուսլիմ): Դա առավոտյան
աղոթքն է, որը Մուհամմեդը
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է
միշտ անել իր հետևորդ Աբու
Հուրայրային, և նա ասաց.

«Ընկերս (մարգարե) խորհուրդ
տվեց երեք բան անեմ՝ ամեն
ամսվա երեք օր պաս պահեմ,
աղոթեմ մինչև ես Օրվա աղոթքը և
ասեմ վիտրը քնելուց առաջ»

(Մուսլիմ): Մենք կարող ենք նշել
այս սուննայի մեծ
նշանակությունը հետևյալ
սովորույթի, որը պատմել է Աբու
Զառը: Նա ասել է, որ մարգարեն
(խաղաղություն և Ալլահի
ողորմությունը լինի նրան) ասել է.
«Յուրաքանչյուրդ պետք է բարի

գործ կատարեք ամեն առավոտ,
 Աստծո ամենագործության
 փառաբանումը բարի գործ է, և
 ամեն բարեխոսությունը Աստծո
 մասին նույնպես բարի գործ է, և
 ամեն անգամ ասելով, որ չկա
 աստված արժանի երկրպագման
 բացի Ալլահից, նույնպես բարի
 գործ է, ամեն անգամ Աստված
 մեծ է ասելը նույնպես, ամեն
 անգամ բարի գործին միանալը
 նույնպես, ամեն չարիքից
 խուսափելը նույնպես, իսկ
 ամենամեծ պարգևները տրվում
 են մինչկեսօրյա աղոթքից առաջ
 ասված կբանիստների դիմաց»
 (Մուսլիմ): Համարեք, որ պետք է
 վճարեք բարեգործությանը ամեն
 ոսկորի համար, որ ունեք ձեր

մարմնում և
 դա երեք հարյուր վաթսուներե,
 ու դուք ի վիճակի չեք անել դա, և
 դրա համար Ալլահը տվել է
 առավոտյան սուննան, **որը
 հավասար է բարի գործերի դիմաց
 տրվող պարգևին:**

Դ. Գիշերային աղոթքը
 /քիյեմ աղոթք /

Ամենամեծ աղոթքներից մեկը դա
 գիշերվա խավարի մեջի աղոթքն
 է, մանավանդ գիշերվա վերջին
 մեկ երրորդ մասում,
 հավասարակշռության
 զգացմունքով, հանգստությամբ,
**հոգու խախտանդությամբ և
 Ամենագոր Ալլահի հետ զրույցից**

հանույթով: Ալլահը գովաբանում է գիշերը աղոթող մուսուլմաններին ասելով.

«Նրանք գիշերվա միայն փոքր մասն են քնել, իսկ լուսաբացից առաջ նրանք աղոթում էին ներման համար» (51, Ադ-Դհարիաթ, 17-18):

Բացի դրանից գիշերային աղոթքը հանդիսանում է Ալլահի առաքյալի (խաղաղություն և Ալլահի ողորմությունը լինի նրան) սուլնաններից մեկը, որը Ալլահը հրամայել է նրան:

Ալլահն ասում է.«Օ, փաթաթված, կանգնիր գիշերը, քիչը կեսը կա

մ դրանից մի փոքր քիչ, կամ մ
ի փոքր շատ, և կարդա Ղուր
ան հանգիստ ձևով» (73: Ալ-
Մուզամիլ, 1-4)

Բացի դրանից Ալլահի առաքյալը
հիշատակում էր դա իր
սովորություններում, ինչպես հայտնել
է Աբու Հուրայրան, որ առաքյալն
ասել է. Պարտադիր աղոթքներից
հետո լավագույն աղոթքը դա
գիշերային աղոթքն է» (Մուսլիմ):
Եվ Մուհամմեդը (խաղաղություն
և Ալլահի ողորմությունը լինի
նրան) գովաց իր հետևորդ
Աբդուլլա բին Ամրոկոբդին
ասելով. «Լավագույն մարդը
